

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԼՂՀ 2005 թվականի մարդահամարի արդյունքները (Քաշաթաղի շրջանի ցուցանիշները)» ժողովածուն ներառում է համապատասխան տեղեկություններ Քաշաթաղի շրջանի բնակչության թվաքանակի ու տարածքային բաշխվածության, ժողովրդագրական բնութագրերի, կրթական մակարդակի, սոցիալ-տնտեսական բնութագրերի, ազգային կազմի, միգրացիայի, տնային տնտեսությունների քանակի ու կազմի, բնակչության բնակության պայմանների վերաբերյալ:

Հրապարակման մեջ զետեղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի առաջին մարդահամարի անցկացման համառոտ պատմությունը:

Հրապարակումը նախատեսված է հանրության լայն շրջանի համար: